

ՊՐՈՖԻՆԴԻՐՆԵՐ

8760

ԱՅԽԱՏԱՆՔԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ

ԽՆՉՊԵՍ ԴԱ ԿԻՐԱՐԵԼ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՐՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՆԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1929

Ա. ՍՈԿՈԼ'ՍԿԻ


331.82

ԱՅՏԱՏԱՆՔԻ ՊԱՅՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ

ԻՆՉՊԵՍ ԴԱ ԿԻՐԱԽԵԼ

A $\frac{1}{4} \pi D^2$



ԽՍՀՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆ
ՄՐՈՍԿՎԱ

Տ. 1929

Առանձին բարգմ. Ե. Ե.

Главлит А 41092

Заказ № 1422

Тираж 4000 экз.

Киц. ф-ка Центриздана Народов СССР. Москва, Шлюзовый проезд, 6

I. ԱՉԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԳԴԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Բոլորին հայտնի յեւ, վոր ամեն մի՞ քիչ թե շատ յերկարատեւ աշխատանք առաջ եւ բերում հոգնածություն։ Հոգնում եւ թե՛ մուրճ խփողը, թե՛ ջուլհակը, թե՛ զրասենյակային ծառայողը և թե՛ ուսուցիչը։

Գիտությունն ասչացուցել եւ, վոր մարդուս (նաև կենդանիների) հոգնածությունն առաջանում եւ նրանից, վոր առանց բացառության յուրաքանչյուր աշխատանքի, զրանց թվում և մանգալու, կարդալու և խոսակցության ժամանակ, աշխատող որգանը — որինակ, ձեռների և վոտների մկանները, սիրտը, աչքերը, ականջները և այլն, — աստիճանաբար մաշվում եւ։ Մարդուս աշխատող որգանների մաշվելը առաջանում եւ մոտավորապես նույն ձևով, ինչպես ամեն մի աշխատող մեքենայի կամ գործիքի մաշվելը։ — աստիճանաբար և աննկատելիորեն նրանցից պոկվում — բաժանվում են մանրագույն մասնիկներ։ Սակայն են դեպքում, յերբ մեքենայի և գործիքի մաշված մասնիկներն աննկատելիորեն ողի մեջ են ցըլում, մարդուս որգանների մաշված մասնիկները

(Քայքայման արդյունք) ընկնելով արյան մեջ՝ արագությամբ ու մեծ չափերով կուտակվում և թունավորում են նրան։ Ահա, ինչպես զիտությունն ե ապացուցել, արյան հենց ես վարակումն ե, վոր առաջացնում ե հոգնածություն։

ՀԱՆԴԻՍՏԸ ՅԵՎ. ՄՆՈՒՆԴՐ

Վորպեսզի հնարավորություն տալ մարդկային որդանիզմին արյան մեջ ընկած մաշված ու թունավոր նյութերից աղատվելու, անհրաժեշտ ե հանգստանալ, այսինքն՝ առժամանակ դադարեցնել աշխատանքը և դրանով կանգնեցնել արյան հետզհետե աճող թունավորումը։ Որդանիզմի մեջ կուտակված թունավոր նյութերը մասամբ ծծվում են արյան մեջ, մասամբ ել արյան հետ շարժվելով դուրս են մղվում մեզի, քրափնքի, արտաշնչած ողի և այլ միջոցով։ Միաժամանակ անընդհատ շրջագայող արյունը մեր մարմնի բոլոր աշխատող մասերին մատակարարում է սննդարար նյութեր, վորով շարունակ նորոգվում են եղ մաշված մասերը։ Ես սննդարար նյութերը, վորոնք արյան միջոցով գնում են մեր մարմնի մասերը նորոգելու, որդանիզմի մեջ վերամշակվում են մարդուս ստացած սնունդի միջոցով։

Ահա թե ինչու բեռնակիրը կամ մուրճ խփողը, որինակի համար, վորոնք ծանր աշխատանք են կատարում և, վորի հետեանքով ել նրանց աշխատող գործա-

բանները շատ են մաշվում, կարիք ունեն ավելի շատ
սննդաբար նյութերի, քան թե համեմատաբար թեթև
աշխատանք կատարող զրասենյակային ծառայողը:

Այսպիսով տեսնում ենք, վոր աշխատանքից մաշ-
ված մարդկային որդանների վերականգնման համար,
կամ ինչպես ասում են՝ աշխատանքի վրա մախված
ուժերի վերականգնման համար անհրաժեշտ ե հան-
գիստ և սնունդ և, վորքան ծանր ե աշխատանքը,
ենքան ել ավելի յե պետք թե մեկից և թե մյուսից:

Բայց եստեղ պետք ե մատնանշել մի այլ հան-
գամանք՝ Բանից դուրս ե զալիս, վոր ինչքան յեր-
կարատե և աշխատանքը, ենքան ավելի արագու-
թյամբ և սաստկանում աշխատողի հոգնածությունը:

Դրա համար ել վոչ մի կերպ չի կարելի յերկար ժա-
մանակ առանց ընդմիջումի աշխատել և ամեն մի աշխա-
տանքից հետո անհրաժեշտ ե համապատասխան հնագիստ:

ԲԱՆՎՈՐԾԿԱՆ ՈՐԾ, ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԳԻՄՏՆ ՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԶԱԿՈՒՐԴՅԸ

Դիտնականները վաղուց արդեն առացուցել են,
վոր հասակավոր մարդը չի կարող, առանց իր առող-
ջությանը միասն հասցնելու, որվա մեջ 8 ժամից ավելի
աշխատել: Սա բացատրվում է նրանով վոր մարդուս
սիրտն աշխատում ե ժամանակի $\frac{1}{3}$ մասը, իսկ մոտ
 $\frac{2}{3}$ -ը հանգստանում: Որվա մնացած 16 ժամը պիտի
նվիրել հանգստի և քնի: Սակայն ես ութ ժամն ել վոչ

մի կերպ չի կարելի աշխատել առանց գոնե մի ընդ-
միջումի:

Եղալիսի ընդմիջում բանվորական որվա ընթաց-
քում անհրաժեշտ է ինչպես հանդստի, նույնպես և
սնունդ առնելու համար:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր յեթե բոլոր
դեպքերում ել աշխատանքը կարճ տեսը, և յեթե աշ-
խատողը հոգնածության հենց առաջին նշանից բժշկի
ցուցմունքով բավականաչափ հանդիսաւ ստանար,
ապա մեր որդանիզմը դերձ կլիներ հոգնածությու-
նից: Իրականում, սակայն, աշխատանքի (որա մեջ և
ման գալու, խոսակցության, տնային աշխատանքի
և այլն) և հանդստի մեջ եղալիսի ճիշտ հաջորդակա-
նություն գրեթե չի պահպանվում: Շատ ու շատ
դեպքերում, տանը կատարած աշխատանքի, մանգա-
լու շնորհիվ և այլն, մարդու, աշխատանքից հետո
ստացած հանդիսաւ բավական չի, վորպեսզի որդա-
նիզմը կարող լինի լիովին հանդստանալ: Ամեն մի
աշխատանքային որից հետո մարդուս արյան մեջ
մնում են վորոշ քանակությամբ չծծված ու դուրս
չեկած թունավոր նյութեր (քայլայման արդյունք),
վորոնք ժամանակի ընթացքում մեր արյան մեջ հոգ-
նածություն, ուժասպառություն են առաջ բերում: Եղ-
պիսի հոգնածությունից ազատվելու համար այլիս ան-
բավարար ե սովորական որեկան հանդիսաւ: Դրա համար
հարկավոր ե շաբաթը մի անգամ լիովին ազատ լինել
աշխատանքից ու յերկարատես հանդիսաւ՝ ամեն տարի:

Առաջին հայացքից շատերին թվում ե, թե վորոշված ժամանակից մի յերկու ժամ ավել աշխատել կամ թե սահմանված հանդստի որը գործելը ենքան ել զժվար չե, վոր դա, համենայն դեպս, առողջությանը վնաս չե: Իրականում, սակայն, աշխատանքի ժամերն ավելացնելու նման սովորությունը միշտ ել ծանր հետևանքներ ե ունենում: Հավանորեն, ամեն մի բանվոր իր որում, յերկարատե աշխատանքից հետո շատ անգամ ե հոգնածություն և ուժասպառություն գտացել: Գիտությունը վերոհիշյալ պատճառների հիման վրա վորոշակի ապացուցել ե, վոր յուրաքանչյուր գերհոգնածություն թուլացնում ե մարդուս որգանիզմը՝ ամեն ըոպե նրան սպասող հիվանդությունների գեմ կովելու համար: Իրա համար ել հոգնած մարդը վորեե հիվանդությամբ ավելի շուտ ե բռնվում քան չոգնածը:

Հաստատ կարելի յե ասել, վոր են մարդիկ, վորնց բանվորական որը չափից դուրս յերկար ե, ավելի շատ են յենթակա ամեն տեսակի հիվանդության, քան թե նորմալ բանվորական որով աշխատողները: Բայց սա դեռ հերիք չե: Քանի վոր յերկարատե աշխատանքից հոգնած մարդու վրա յերեվում ե ցրվածություն, թուլանում ե ձեռքի վարժությունն ու ամրությունը, թուլանում ե տեսողությունը, լսողությունը և այլն, ապա ընական ե, վոր

եղ ժամերին իջնում ե և նրա աշխատանքի արտազրողականությունը։ Ես մտքի ճշտությունը լիովին ապացուցված է գիտական հետազոտություններով, և սա, անկատկած, ամեն մի բանվոր ել իր վրա փորձած կլինի:

Բայց վոր ամենից կարեորն ե, — չափից դուքս յերկարատե աշխատանքը, հիվանդություններից ու աշխատանքի ցածր արտադրողականությունից բացի, ավելացնում ե և դժբախտ պատահարների թիվը։ Յեթե չհոգնած բանվորը հեշտությամբ ե նկատում իր գործի վտանգավոր տեղերը և ամեն կերպ աշխատում ե խուսափել նրանցից, առա հոգնած բանվորն ավելի վատ ե նկատում վտանգը, բայց չի զգուշանում նրանից և գրա համար ել հաճախ կորցնում ե իր առողջությունը, իսկ յերբեմն ել իր կյանքը։ Բանվորների հետ դժբաղդ պատահարների թվերը ցույց են տալիս, վոր հաշմության դեպքերը մեծ մասամբ տեղի յեն ունենում հատկապես բանվորական որվա ինչպես առաջին, նույնպես և յերկրորդ կեսերի վերջին, այսինքն են ժամանակ, յերբ բանվորներն ամենից շատ են հոգնած լինում։

Ահա թե ինչու շատ յերկարատե, կամ եսպես կոչված արտաժամյա աշխատանքը բանվորների առողջության համար շատ վտանգավոր է և գործարանի ու զավոդի համար ել վոչ-ձեռնտու։

Այսպիսով տեսնում ենք, վոր բանվորների առողջության շահերը հրամայորեն պահանջում են. 1) վոր

բանվորական որը 8 ժամից ավելի չլինի, 2) վոր բանվորական որվա ընթացքում առնվազն մի ընդմիջում լինի, 3) վոր առանց բացառության բոլոր բանվորներին պարտադիր կերպով տրվի շաբաթվա մեջ մեկ աղաս հանգստի որ և տարեկան մի անգամ արձակուրդ (թեկուզ 2 շաբաթ տևողությամբ), և 4) վորպեսզի արտաժամյա աշխատանք չթույլատրվի:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՎՆՍՍԱԿԱՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԶ

Ես պահանջները, վորոնք բավարար են սովորական արտադրության կամ ցեխերում (համբարություն) աշխատող հասակավոր բանվորների առողջության պահպանության համար, — անբավարար են առանձնապես միասակար արտադրությունների համար: Ցեթե ամեն մի ուղածդ՝ արտադրության մեջ, ուր բանվորը թունավոր գաղեր չի շնչում, կամ անտանելի շոգի մեջ չի գտնվում, — աշխատանքն հոգնեցուցիչ ե, ապա՝ միասակար արտադրություններում զբաղված բանվորները շատ ավելի վատթար վիճակում են գտնվում: Արհեստանոցների թունավոր գաղերով ու փոշով լի ողը, կամ թե առթ ցեխերի անտանելի շոգն, աշխատանքի ընդհանուր հոգնածությունից զատ, բանվորների առողջությանը ավելի ևս միաս են հասցնում:

Վորպեսզի գեթ վորոշ չափով պահպանած լինենք նման բանվորների առողջությունը, հարկավոր ե

արտադրության վերոհիշյալ մնասները վերացնելուց
առաջ կրծատել բանվորական որը և ավելացնել նրանց
տարեկան արձակուրդի տևողությունը։ Բացի եղ, մի
շարք առանձնապես մնասակար արտադրություններ-
ում վորպես հակաթույն՝ անհրաժեշտ և բանվորներին
տալ կաթ կտմ ճարպ։

Ինքն իրեն հասկանալի յե, վոր բոլոր այն զեղ-
քերում, յերբ բանվորները պիտի գործ ունենան
թունավոր նյութերի հետ, աշխատեն խոնավության
մեջ, շիկացած վառարանների մոտ, պետք ե նրանց
տալ հատուկ հագուստ, վորը նրանց կպաշտպաներ
այրվածքներից, թրջվելուց, մարմնի մեջը թունավոր
փոշի թափանցելուց և այլն։

ԱՆՁԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՆԱՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Անչափահամների և կանանց որդանիզմն ավելի
թույլ ե քան տղամարդկանցը, դրա համար նրանց
առողջության պահպանումը պահանջում է լրացուցիչ
հոգատարություն։ Եսպես՝ անչափահամների որդանիզ-
մը ավելի հանգստի պետք ունի, քան տղամարդկանցը։
Եղ պատճառով ել անչափահամների համար բանվո-
րական որն զգալիորեն կարճ պիտի լինի, քան չափա-
համների համար, իսկ տարեկան արձակուրդն — ավելի
յերկարատես։ Անչափահամների առողջությունը վտանգի
չենթարկելու համար, նրանց չպիտի ընդունել մի

շարք վնասակար արտադրությունների մեջ, նույնպես
և գիշերային աշխատանքների:

Բանվորուհի — մայրերի, նմանապես և մանուկ-
ների առողջության շահերի աեսակեաից միանդամայն
անհրաժեշտ ե նրանց ծննդից տուած և ծննդից հետո՝
աշխատանքից ազատել բավական յերկար ժամա-
նակով, իսկ հատկապես յերեխային կերակրելու հա-
մար աշխատանքի ընթացքում ընդմիջումներ սահմա-
նել՝ ամեն $3\frac{1}{2}$ ժամը մի անգամից վոչ պակաս: Մի
շարք թունավոր նյութեր, վորպիսին են, որինակ, ար-
ճիճը, սնդիկը և զառիկը (մալաք), վոչ միայն բան-
վորուհու որդանիդմն են թունավորում, այլ մոր կաթի
հետ՝ ծծկեր մանուկներինը, ինչպես նաև կանանց բնա-
կան վիժումների պատճառ դառնում, հաճախ նրանց
զրկելով ծննդաբերության կարողությունից: Դրա հա-
մար ել յեխնելով կանանց և մանուկների առողջու-
թյան շահերից անհրաժեշտ ե արգելել կանանց աշ-
խատանքը. հատկապես վնասակար արտադրություննե-
րում, նկատի առնելով առաջացող ծանր հետևանքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ

Մենք կանգ չենք առնի բանվորների ու բանվո-
րուհիների առողջության շահերից բղխող աշխատանքի
պաշտպանության այլ, ավելի մանր պահանջների վրա:
Մատնանշենք միայն, վոր աշխալաշապանության բո-
լոր մեր թված պահանջները — 8 ժամյա բանվորա-

կան որվա, աշխատանքի մեջ ընդմիջումների, շաբաթական հանգստի որի, հերթական և լրցուցիչ տարեկան արձակուրդների, արտաժամյա աշխատանքներն արգելելու և անչափահասների ու կանանց աշխատանքի համար հատուկ պայմաններ սահմանելու նկատմամբ, — ես բոլորը բավական լիակատար կերպով նախատեսված են աշխաղաշտպանության խորհրդային որենքներով։

Դեռ ավելին, խորհրդային կառավարությունը 1927 թ. հոկտեմբերին մանիֆեստ հրապարակեց՝ աստիճանաբար 7-ժամյա բանվորական որ մտցնելու արդյունաբերության և արանապորտի բանվորների ու ծառայողների համար։ Այս վորոշումը աշխաղաշտպանության գործում հսկայական քայլ ե դեպի առաջ, քանի վոր նա նշում ե բանվորական որի կրծատումն և այդպիսով՝ հանգստի հավելումն մի ամբողջ ժամով։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԻ
ԿԻՐԱԾՈՒՄԸ ԱՍՏԻՃԱՆԸ

Սակայն, կարող են ասել, — այլ բան ե լավ որենքը, խոկ ուրիշ բան՝ այդ որենքը կյանքում իրապես կիրառելը։ Ցեղե մենք նայենք, թե արդյոք վճրչափով են եղ որենքները կիրառվում, ապա իրոք, աշխաղաշտպանության ես մասում նպաստավոր պատկեր կտեսնենք։

Եսպես՝ ութ ժամյա բանվորական որը մեր գործարաններում ու զավոդներում կիրառվում ե լիովին։

Շնորհիվ են բանի, վոր մի շարք վասսակար ցեխերի
և անչափահասների համար սահմանված ե կրճատ
բանվորական որ, արտադրության մեջ զբաղված ամեն
մի բանվորին ընկնող բանվորական որվա իրական տեռ-
դությունը որեկան մինչեփսկ 8 ժամից պակաս ե
կազմում։ 1923 և 1924 թթ. որինակ, բանվորական
որվա տեռդությունը, արտաժամյա աշխատանքների
հետ միասին առած, միջին հաշվով ամեն մի գործա-
րանային բանվորին կազմում եր որեկան 7 ժամ
48 րոպ, իսկ 1927 թ. — մինչեփսկ 7 ժամ 28 րոպե։
Ճաշվա ընդմիջում անելու կանոնը կիրառվում ե
ձեռնարկությունների մեծ մասում։ Միայն փոքրաթիվ
գործարաններում ու զավողներում ե, վոր ընդմիջում
չի սահմանված, դա յել նրա համար, վոր իրենք բան-
վորները համաձայն են առանց ընդմիջումի աշխատե-
լու։ Եստեղ, սակայն, պետք ե ասել, վոր 7 ժամյա
բանվորական որվա իրականացման հետ, 7 ժամյա որ
կիրառող մանածագործարաններից շատերում ճաշվա
ընդմիջումները մեծ մասամբ իրենց բանվորների ցան-
կությամբ (վորոնք չեն ուզում ժամանակ կորցրած
լինել տուն գնալու վրա) նույնպես վերացված են։
Ենչափ, վորչափ առանց ընդմիջումի աշխատանքի
վասն ակներեւ, պրոֆմիություններն ու աշխատանքի
որգանները պայքարում են դրա դեմ։

Լիովին կիրառվում են կյանքի մեջ շաբաթական
հանգստի որ հատկացնելու, տարեկան յերկշաբաթյա,
իսկ անչափահասների ու հատկապես վասսակար ար-

տաղբության բանվորների համար մի ամսվա արձակուրդի որենքները։ Այսպես 1924 թվին ամեն մի ֆաբրիկ-գործարանային բանվորին հասնող արձակուրդը կազմում եր մոտ 13 բանվորական որ, իսկ 1926 և 27 թվերին արդեն 14-ական որ (յերկու շաբաթն, ինչպիս ու տեղք, քիչ պակաս և 12 բանվորական որից)։

Զի կարելի զանգատվել և կանանց ու անչափահասներին վերաբերող որենքների վատ լիրառվելուց։ Հիմնականում պահպանվում են անչափահասների և ծծմայր կանանց բանվորկան որվա բոլոր կանոնները, — յերկարատև արձակուրդների և գիշերային աշխատանքների արգելման, մխասակար արտադրության մեջ աշխատելու մասին և այլն։ Սակայն կանանց և անչափահասներին աշխատանքի ընդունելը հեշտացնելու և մուրացկանությունից ու պոռնկությունից նրանց հեռու պահելու համար, հարկ յեղավ վորոշ որենքներ վերաքննելու։ 1925 թվից սկսած հարկ յեղավ, որինակ, սկսել անչափահասներին ու կանանց թույլ տալ աշխատելու ավելի կամ նվազ վտանգավոր ենպիսի արտադրության մեջ, ուր առաջ նրանց չեր թույլատլ վում։ Ավելի լայն չափերով թույլ տալ սկսեցին կանանց՝ գիշերային աշխատանքի, հատկապես մանածագործարաններում, 7-ժամյա բանվորական որ սահմանելու և 3 հերթաշխատանքի անցնելու հետևանքով։ Վերաքննված են կանանց՝ ծանրություններ կրելու նորմաները։

Ցեվ չնայած մասնավոր, մանր արհեստանոցներում, այժմ ել դեռ, հաճախ խախտվում են կանանց

ու անչափահասների աշխատանքի կանոնները, այսու-
ամենայնիվ դա առանձին նշանակություն չունի (նման
դեպքում, ինարկե, ինչպես աշխատանքի որենքի ամեն
մի խախտումն եղափիսի խախտումները հետապնդվում
և պատժվում են), քանի վոր անչափահասների ու
կանանց ճնշող մեծամասնությունն զբաղված ե խո-
շոր ձեռնարկներում, ուր նրանց աշխատանքի պաշտ-
պանությանը վերաբերող որենքները իրագործվում
են բավարար չափով:

Ենքան ել լավ չե աշխատանքի իրավական պաշտ-
պանության գործը սպեցհագուստի արտաժամյա աշ-
խատանքների նկատմամբ։ Սպեցհագուստը կամ (ար-
տադրական հագուստը) միշտ ել լրիվ և ժամանակին
չի տրվում և ամենազլխավորը՝ վորակով հաճախ շատ
ցածր ե լինում, վորի շնորհիվ և վորոշված ժամանակից
շուտ ե մաշվում։

Արտաժամյա աշխատանքներն, ինչպես հայտնի յե,
վսասակար ազդեցություն ունեն բանվորների առող-
ջության վրա։ Զեռնտու չեն նրանք նաև հիմնարկին,
քանի վոր շատ թանգ են նատում։ Յեկ այնուամե-
նայնիվ, հաճախ աշխարհայում վորակյալ բանվորների
բացակայության պատճառով, իսկ ավելի շուտ՝ հիմ-
նարկը ժամանակավոր բանվորներ ու ծառայողներ
վարձել չկամենալով, մեզ մոտ արտաժամյա աշխա-
տանքներ կատարվում են։ Եսպես, 1927 թվին ար-
տաժամյա աշխատել են բոլոր գործարանային բան-
վորների 17,4%-ը, ըստ վորում, ամեն մի բանվորին

ամիսն ընկնում եր 17 ժամ արտաժամյա։ Առանձին խո-
շոր ձեռնարկներում արտաժամյա աշխատանքն ամեն
մի բանվորին հասնում եր մինչեփսկ 2 ժամի։
Պակաս արտաժամյա չի կիրառվում նաև գործարա-
նային գրասենյակներում՝ հաշվեավությունների և հաշ-
վեկցուներ կազմելու ժամանակի։ Սակայն չնայած
դրան, ինչպես վերն ասացինք, փաստացի բանվորական
որը մեղ մոտ միջին հաշվով բոլորովին բարձր չե, մի
բան, վորը բանվոր դաստկարգի խոշոր նվաճումներից
մեկն ե հանդիսանում։

Ավելորդ ե մատնանշել, վոր արտաժամյա աշխա-
տանքների անտեղի կիրառման և սպեցհագուստ տալու
թերությունների դեմ վճռականորեն պիտի պայքարել։

Ի մի գումարելով վերև ասածները մենք
տեսնում ենք, մի կողմից, վոր աշխատանքի, իրավա-
կան պաշտպանության խորհրդային որենքները բա-
վական չափ են հոգում բանվորի առողջության հա-
մար և, մյուս կողմից, վոր եղ որենքները հիմնակա-
նում իրավես կերառվում են։

Մենք ես զրքույկի մեջ նպատակ չենք դնում
խորհրդային որենսղբությունը համեմատել բուրժուա-
կան որենսղբության հետ, սակայն հարկավոր ե
վճռականորեն ընդգծել մեր աշխաղտպանության
որենքների անհամեմատ առավելությունը՝ կապիտա-
լիստականից։

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Նախորդ գլխում մենք խոսեցինք զլիավորապես հոգնելու վասակարության և աշխատանքի պաշտպանության են որենքների մասին, վորոնց նալատակն և պաշտպանել բանվորներին հոգնածությունից։

Սակայն բանը նրանումն ե, վոր բանվորներն աշխատելիս միայն չեն հոգնում։ Յեթե աշխատանքը շարունակ կատարվեր բաց ողի մեջ և լավ պայմաններում և բանվորները գործ չունենային վտանգավոր մեքենաների և հսկայական ծանրությունների հետ, եղ դեպքում ամեն ինչ միայն հոգնածությունից կախված կլիներ։ Իրականում սակայն այլ կերպ ե։ Նախ քիչ չեն ստորյերկրյա և ջրասույզային աշխատանքները, վառողի պատրաստության, թունավոր գազերի, արճիճե առարկաների և այլ աշխատանքները, վորոնց վասակարությունն ու առողջության համար վտանգավոր լինելը բացատրության կարիք չեն զգում։ Յերկրորդ՝ վորոշ ֆարբիկներում և գործարաններում տիրում ե կամ չափից դուրս տաք կամ ցուրտ, և կամ չափազանց թույլ կամ շատ ուժեղ լույս, խլացուցիչ դղրդյուն, մշտական փոշի, թին ու ծուխ։ Արտադրության ես չարիքները վասառում են բանվորների առողջությանը, իջեցնում են նրանց աշխատանքի արտադրողականությունը և դրանով վասառում ալետությանը, մյուս կողմից եւ՝ իջեցնում բանվորների աշխատավարձը։

Յեթե հիշենք, վոր բանվորների հետ դժբախտ գեղքերը պատահում են մեքենաների չպաշտպանված, կամ յեղածի վատ դրության, ստանոկների ու գործիքների սարքին չլինելու հետևանքով, իսկ հաճախ ել բանվորների իրենց անզգուշության և անվությունները բանվորների առողջությանն ու ընդհանրապես ամբողջ պետությանը հսկայական վնաս են հասցնում:

Այսպիսով, յելնելով բանվորների առողջության ու կյանքի, ինչպես նաև ամբողջ պետության շահերից՝ արտադրության չարիքների, տեխնիկական թերությունների ու անկանոնությունների դեմ պայքարելը նույնչափ կարեոր է, վորչափ բանվորների հոգնածության դեմ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅԻՐԾԱՆՆԵՐԸ ԲԱՐԵԼԱՎՈՂ ՈՐԵՆՔՆԵՐ

Խորհրդային որենքներն, ինարկե, նկատի ունեն աշխատանքի պայմանների բարելավման ամբողջ վիթխարի նշանակությունը — արտադրության վսասակարությունը վերացնելու միջոցով։ Դրա համար ել, բանվորական որվա տեսողության, արձակուրդների և աշխատանքի պաշտպանության այլ կանոններից զատ, դոյություն ունեն նաև մանրամասն որենքներ ու կանոններ ֆաբրիկ-գործարանային ձեռնարկների կառուցման և պահպանության վերաբերյալ։

Եղ որենքների համաձայն վոչ մի նոր ձեռնարկ չի կարող բացվել, դործի զցվել կամ մի շենքից մյուսը փոխադրվել առանց աշխատեսչության պատշաճ թույլտվության։ Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի հատուկ վորոշումները պարտավորեցնում են բոլոր հիմնարկ - ձեռնարկներին միջոցներ ձեռք առնել վերացնելու կամ նվազեցնելու աշխատանքի վնասակար պայմանները, կանխելու դժբախտ պատահարները և աշխատանքի վայրերում անհրաժեշտ կարգ ու մաքրություն պահպանելու։ Եսպես, եղ որենքներով նախատեսվում ե ողափոխության անհրաժեշտությունն ու կարգին լինելը, բավարար լուսավորություն, տաքություն, ջրամատակարարումն, մեքենաների շրջափակումն, աշխատանքի վտանգավոր վայրերում պաշտպանության հարմարություններ, մեքենաների, ստանոկների ճիշտ դասավորություն և այլն։ Մի խոսքով, մեր աշխաղտպանության որենքներում արտադրության ֆնամները վերացնելու կանոնները բավական աչքի ընկնող տեղ են գրավում, աշխատանքի իրավական պաշտպանության կանոններից վահ պակաս։

Մինչեւ իսկ ավելին, կարելի յե պնդել, վոր արտադրության ֆնամների և անվտանգության տեխնիկայի գործում անկանոնությունները վերացնելը շատ ավելի մեծ նշանակություն ունի, քան աշխատանքի իրավական պաշտպանության վորոշ պահանջներն ոգտագործելը, վորոնց նպատակն ե լոկ աշխատանքի վատ պայմաններից բղխող ֆնամը թուլացնել (որինակ լրա-

յուցիչ արձակուրդ, կրծատ բանվորական որ, սպեց-
կաթ և այլն): Ավելի հեշտ ե առողջությունը կորցնելը
կամ ձեռնարկի վատ դրության հետեանքով հաշմելը,
քան կորցրած առողջությունը յետ դարձնելը: Բան-
վորական որը 1—2 ժամով կրծատելը կամ թե ավե-
լորդ մի յերկու շաբաթ արձակուրդը բանվորին ամե-
նամին չեն կարող բժշկել գործարանում ստացած
թունավորումից, խլությունից, կուրությունից կամ
հաշմությունից, ել չասենք, ինարկե, վոր միանգա-
մայն անկարող են վերադարձնել կորցրած կամ ան-
դամալույծ դարձած ձեռները կամ վոաները:

ԱՆԲԱՎԱՐԱՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Սակայն չնայած են բանին, վոր մեր աշխաղտ-
պանության որենքները չափազանց մեծ կարևորու-
թյուն են տալիս աշխատանքի պայմանների բարելավ-
մանը ձեռնարկներում, մինչեւ վերջին ժամանակներս
ես աշխատանքին անբավարար ուշադրություն եր դարձ-
վում: Են ժամանակ, յերբ ձեռնարկի առողջապահա-
կան — տեխնիկական թերությունները վաստամ եյին
բանվորների առողջությանը, պրոֆմիությունները,
աշխաղաղտպանության որգաններն ու իրենք բան-
վորները համառորեն ծգտում եյին կրծատված բան-
վորական որ, լրացուցիչ յերկշաբաթյա արձակուրդ,
սպեց-կաթ կամ սպեց-ճարպ ձեռք բերել: Միաժա-
մանակ վորոշ միություններ հարկ յեղած ուշադրու-

թյունը չեյին դարձնում ձեռնարկի սանիտարական-
տեխնիկական թերությունների վերացմանը՝ անտե-
սական որգանների կողմից, թերություններ, վորոնք
վնասում են բանվորների առողջությանը։ Աշխատա-
պանության խնդիրների նման հասկացողություն գոյ-
ություն ուներ առաջ և այժմ ել դեռ շարունակվում եւ։

Ի՞նչն եր զեսպի աշխատանքի պաշտպանությունը
նման վերաբերմունքի պատճառը։

ԽՈՇՈՐ ՄԻԶՈՅՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին և զլախվոր պատճառը կայանում եր անհրա-
ժեշտ խոշոր միջոցների բացակայության մեջ։ Մեր
ֆաբրիկների և գործարանների մեծ մասը շինված
լինելով սրանից շատ տարիներ առաջ, ընդհանրապես
չեն համապատասխանում աշխատավանության կա-
նոններին, վորովհետեւ շինելով դրանք, կազմակերպ-
ները շատ ել չեյին մտածում բանվորների առողջու-
թյան մասին։ Հեղափոխության և քաղաքացիական
կռիմների առաջին տարիներին ձեռնարկներն ել ավելի
եյին քայլայլում։ Եղ ձեռնարկների սանիտարական—
տեխնիկական թերությունները վերացնելու համար
անհրաժեշտ ե հիմնովին վերաշինել դրանք և մաշ-
ված մեքենաներից ու ստանուկներից շատերը փոխա-
րինել ավելի նոր, կատարելագործված մեքենաներով։
Նոր գործարանների ու զավոդների կառուցման հետ
միաժամանակ իհարկե, նորոգվել են նաև հները, —

սակայն դա արված ե զեռ ևս վոչ բավարար չափով — հսկայական միջոցների բացակայության պատճառով, միջոցներ, վորոնցով հնարավոր կլիներ բոլոր գործարանները լիովին վերաշինել ու կահավորել:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆՓՈԽՅԹ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Յերկրորդ կարեոր պատճառը ձեռնարկներից շատերի վարչության անփույթ վերաբերմունքն ե զեսլի իրենց մոտ տիրող անկարգությունները, հատկապես դեպի աշխաղաշապանության թերությունները։ Ոդավելով նրանից, վոր ձեռնարկը բավականաչափ միջոցներ չունի արտադրության վասաները վերացնելու համար աշխատանքներ կատարելու, շատ ձեռնարկատերեր անփութորեն են վերաբերվել նաև բանվորների առողջությանը վաստակ մի շարք ենալիսի թերություններ վերացնելուն, վորոնք մեծ ծախս չեցին պահանջի։

Անփութությունն որինակ մինչև ենտեղն եր հասնում, վոր շատ արհեստանոցներում ապակիները ամիսներով ու տարիներով չեցին սրբվում, վորի հետևանքով բանվորները զրկված եյին լինում բավարար լույսից, կամ թե կոտրած ապակին ամիսներով չեր փոխվում, վորի շնորհիվ բանվորները սառչում և մըրսում եյին։ Վորոշ ձեռնարկների վարչություններ ավելի շուտ համաձայնվում եյին բանվորների մի մասին լրացուցիչ արձակուրդ կամ կրճատ բանվորական որ տալ, փոխանակ նրան, վոր իրենց ինժիներներին

և տեխնիկներին ստիպեն լրջորեն մտածելու եռ կամ են թերությունը վերացնելու համար։ Յեվ չնայած նրան, վոր լրացուցիչ արձակուրդը կամ կրճատ բանվորական որն աշխատանքի պայմանների վատացման հետեւանքով արտադրության ցածր վորակի հետ միասին ձեռնարկի վրա եժան չեր նստում (հաճախ ավելի թանգ, քան արտադրության վնասների վերացման համար պահանջվող ծախսերը), այնումենայնիվ աշխատանքի պայմանների բարելավման վրա տնտեսական մարմինները քիչ ուշադրություն եյին դարձնում։

Վորոշ տնտեսական որգաններ եղանքս վարվելով, կարծում եյին իրենց համար ավելի հեշտ և ձեռնտույե սստիճանաբար փոքր գումարներ ծախսել լրացուցիչ արձակուրդների, կրճատ բանվորական որվա և աշխատանքի ցածր արտադրողականության վրա, քան թե միանգամից մի զգալի գումար հատկացնել սանիտարական — տեխնիկական թերությունների վերացմանը։ Սակայն մենք համոզված ենք, վոր շատ աղմինիստրատորների՝ իրը թե ձեռնտու եղ գործողությունները, մեղ վրա շատ թանգ նստող ռինայողությունն են — թարս տեսակի խնյողություն, վորն այսուհետեւ, իհարեկե, չի կարելի թույլ տալ։

ՍևԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՐՆ ԱՇԽՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Յերրորդ պատճառը կայանում է նրանում, վորդեռ ևս քաղաքացիական կոխվերի և ուազմական կո-

մունիզմի ժամանակներից, յերբ մեր ձեռնարկները
վերաշինել ու բարելավել դրեթե անհնար եր, մեր
բանվորներն ու պրոֆմիությունները սովոր եյին մխաս-
ների փոխարենը հատուցումն (կոմպենսացիա) պա-
հանջել, որինակ միանգամից լրացուցիչ արձակուրդ,
կրճատ բանվորական որ, սպեց-ճարպ և կաթ: Քա-
ղաքացիական կոփմերից հետո, ինչպես հայտնի յե,
պայմանները խիստ փոխվեցին, գործարաններն ու գա-
վողները վերանորոգվել ու բարելավվել սկսեցին,
սակայն մոտեցումը դեպի աշխաղաշտպանությունը
վորոշ գեպքերում ելի նույնը մնաց: Փոխանակ յեռան-
դուն կերպով տշխատանքի պայմանների բարելավ-
ման համար պայքարելու և սանիտարական-տեխնիկա-
կան թերություններին անուշաղիք վերաբերվող ձեռ-
նարկների կառավարիչներին պատասխանատվության
կանչելու, բանվորներն, պրոֆմիություններն ու աշխ-
ատեսուչները հաճախ բավականանում եյին նրանով,
վոր բանվորների վորոշ մասը կրճատ բանվորական
որ կամ լրացուցիչ արձակուրդ ստանա:

Ահա ես յերեք գլխավոր պատճառներով եր, վոր
արտադրական ձեռնարկների պահպանության և շինա-
րարությանը վերաբերող որենքերը մեզ մոտ բավա-
կանաչափ յեռանդուն կերպով չեյին իրագործվում:

. ԶԵՐՆԱՐԿՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ

Ցեթե նայենք մեր հին գործարանների ու գա-
վողների սանիտարական-տեխնիկական դրությանը,

ապա կտեսնենք, վոր պատկերն ենքան ել միսիթարական չե: Բազմաթիվ հետազոտությունները ցույց տվին, վոր հազվագեղ են ենալիսի ձեռնարկներ, վորոնք աշխատանքի պաշտպանության տեսակետից խոշոր թերություններ չունենան: Ձեռնարկների ճնշող մեծամասնությունը սանիտարական-տեխնիկական խոշոր թերություններ ունի: Ոդափոխության պակաս, մեքենաների և ստանոկների վատ շրջափակումն, աշխատավայրի թույլ լուսավորում, չափից դուրս շող կամ անբավարար տաքություն ու լվացարանների, սրբիչների, սապոնի, յեռացրած ջրի բացակայություն և այլ բազմաթիվ մանր ու խոշոր թերություններ — վորքան ուզես:

Սակայն, խոսելով այս թերությունների մասին, չպիտի կարծել, վոր մեղ մոտ ես ուղղությամբ վոչինչ չի արփած: Պետք ե վորոշակի ընդդեմ, վոր շատ բան ե արփած: Աշխատանքի պայմանները բարելավելու մեր աշխատանքի թափի մասին գաղափար կազմելու համար կարելի յե ցույց տալ հետեւյալ թվերը. 1924—25թ. ՌՍՖՌ մեջ գտնված խոշոր պետական արդյունաբերությունն աշխատավայրանության վրա ծախսել ե մոտ 15,6 միլիոն ռուբլի, 1925—26-ին՝ 22,4 միլ., 1926—27 թ.՝ 27,2 միլ., 27—28 թ.՝ 33,3 միլ ռուբլի: Ամբողջ ԽՍՀՄ մեջ գտնված խոշոր պետական արդյունաբերության կողմից աշխատավայրանության վրա կատարված ծախսերը կազմում են 1926—27 թվին՝ 37 միլ. ռուբլի, իսկ 1927—28 թ.՝ մոտ 50 միլ. ռուբլի:

Ես միջոցների մոտ 25—30%-ը ծախսվել ե ողահանության աշխատանքների վրա, 16—20%-ը բաղնիքների, մասնագիտական հագուստների և այլ ոժանդակ շենքերի կառուցման վրա, 33—35%-ը անվտանգության տեխնիկայի և մոտ 20%-ը արդյունաբերական սանիտարիայի վրա:

Բացի աշխատաշպանության վրա ծախսված վերսիշյալ գումարներից, արդյունաբերությունը բաղմաթիվ աշխատանքներ ե կատարել գործող ձեռնարկները վերաշինելու և սարքավորելու համար: Ես աշխատանքների վորոշ մասով, աշխատաշպանության թերություններից շատերն են վերացվել, չհաշված աշխատաշպանության գումարների հաշվին կատարված բարելավումները:

Եսպիսով, քաղաքացիական կոփմներից դեռը մեր գործող ձեռնարկներում աշխատաշպանության վիճակը բարելավելու տեսակետից ահազին բան ե արվել:

Սակայն, չնայած դրան, ինչպես վերը ցույց տվինք, աշխատաշպանության դրությունը հին ձեռնարկներից զգալի մասի մեջ դեռ ևս մնում է վոչ իր բարձրության վրա: Դա բացատրվում է հետեւյալով: Հին ձեռնարկներն տարեց տարի ավելի ու ավելի յեն մաշվում: 1925—27 թթ. մեր արտադրության լայնացման հետևանքով գործի գցվեցին մինչ այդ անգործության մատնված նվազ հասույթաբեր ձեռնարկներ և ոգտագործվեցին թեկուղ փոքր չափով պիտանի մեքենաներն ու ստանոկները: Եղ ժամանակ, գործա-

բանային շենքերի թույլ շինարարության հետևանքով
1924—27 թթ. բանվորների թիվը գործարաններում
ու զավոդներում զգալիորեն աճեց, վորով և ավելա-
ցավ արհեստանոցների նեղվածքը:

Ահա են պատճառները, վորոնց հետևանքով, չնա-
յած տարված աշխատանքին, մեր ձեռնարկների սանի-
տարական-տեխնիկական վիճակը մնում է դեռևս բա-
վական ծանր:

Իսկ հետագայում ևս հանդուրժել, վոր աշխա-
տանքի իրավական պաշտպանության որենքները կի-
րառվեն բավարար, իսկ սանիտարական-տեխնիգական
կանոնները — վաստ, վոչ մի կերպ չի կարելի: Դա
անկարելի յե թույլատրել հենց նրա համար, վոր եղ
թերությունները մնասակար կերպով են անդրադառ-
նում բանվորների առողջության վրա, նվազեցնելով
նույնակես աշխատանքի արտադրողականությունը:

ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿՆԵՐԻ ԱՌԱՋԻԿԱ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ,
ԱՇԽՊԱՇՏՎԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերջին տարիներում մեզ մոտ բավական լայն
կերպով առաջ գնաց հին ֆաբրիկների և գործարան-
ների վերաշինությունն ու վերակահավորումը: Ուժեղ
թափով կառուցվում են և նոր ձեռնարկներ: Ես նոր
շինարարությունը, այլ և հին գործարանների վերակա-
հավորումը տարի մեծանում եւ և արդյունաբե-
րության ճամանակակից ավելի լայն ծավալ ե ընդունելու:

Եսպես, հնդամյա պլանի համաձայն 1928—29թ.—

1932—33թ. միմիայն արգյունաբերության գծով (առանց տրանսպորտի և կոմունալ ձեռնարկների) վորոշված ենոր ֆաբրիկների և գործարանների վրա ծախսել 6,5 միլիորդ ռուբլուց ավելի և մոտ 4,3 միլիորդ ռուբլի՝ գործող ձեռնարկների վերականավորման և լայնացման վրա, ըստ վորում, ես գումարների մեջ չեն մտնում նրանք, վորոնք պիտի ծախսվեն գործող հիմնարկների հիմնական ռեմոնտի վրա:

Աշխատանքի պաշտպանության ձեռնարկումներին հատկացված ծախսերը հնդամյա պլանով կազմում են 313 միլիոն ռուբլի:

Ես թվերից յերեսում եմ, թե վորավիախ ահոելի աշխատանքներ կան մեր առաջ ֆաբրիկների և գործարանների նոր կառուցումների ու վերաշինության գործում:

Մենք ստիպված ենք հաշտվել են բանի հետ, վոր կապիտալիստների շինած հին ձեռնարկները շատ քիչ են համապատասխանում աշխատպանության ներկա պահանջներին, սակայն արդեն միանդամայն անսկի-ճելի յե, վոր նոր կառուցվող և հիմնովին վերաշինվող ձեռնարկներում անհրաժեշտ է վաղորոք նախատեսել աշխատպանության բոլոր պահանջները: Համենայն դեպս, արտադրության են մնասակար կողմերն ու առողջապահական-տեխնիկական այլ թերություններն, վորոնք գիտության արդի վիճակով հնարավոր են վերացնել, չպետք է տեղի ունենան: Սա առանց բացառությունների յել ակներեւ եւ:

Աշխատանքի պաշտպանության անհրաժեշտ պահանջների իրազործումն ապահովելու նպատակ է որդաններին բոլոր նոր կառուցվող և կապիտալ նորոգության յենթակա ձեռնարկների հատակագծերն ու գծագրությունները համաձայնեցնել աշխատականության պետական որդանների հետ (տեխնիկական և սանիտարական տեսչություններ):

Յեթե հին ձեռնարկներում սանիտարական-տեխնիկական թերությունների վերացման որենքների չկատարելը դեռ ևս կարելի լինի արդարացնել խոշոր գումարների բացակայությամբ, ապա տնտեսական մարմինների կողմից վերոհիշյալ հատակագծերը աշխատեսչությանը չներկայացնելն արդեն դեպի աշխատականությունն ունեցած անփութությունից զատ ուրիշ բանի վերաբերել չի կարելի: Դժբախտաբար, հարկավոր ե նշել, վոր եղախսի անփութություն գոյություն ունի: Նկատված են դեպքեր, յերբ անտեսական հիմնարկները նոր ֆաբրիկներ ու գործարաններ սկսում են կառուցել կամ թե հները հիմնովին վերաշինել նեղություն չկը ելով նոր սկսվող շինարարության պլաններն ու գծագրությունները աշխատեսչության յեզրակացությանը ներկայացնելու: Իսկ քանի վոր ձեռնարկների ճարտարապետ-կառուցվողները միշտ ել լավ տեղյակ չեն աշխատականության պահանջներին, իսկ նրանցից վորմանք ել ես կամ են պահանջին լուրջ չեն վերաբերվում, ուստի դեպքեր են լինում, վոր եղ նոր

շինությունները բանվորների առողջությանը սպառնացող սանիտարական-տեխնիկական բազմաթիվ թերություններ են ունենում, դեռ չհաշված իրեն արդյունաբերությանը հասնող միասը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՊԻՏԻ ԱՌԱՋԻՆ ՊԼԱՆԻ ՎՐԱ

Եսպիսով, մենք գալիս ենք են յեզրակացության, վոր ինքը բանվորական մասսան, ոլրոֆմիություններն ու աշխատանքի տեսչությունը՝ բանվորների առողջության շահերի և նրանց աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու տեսակետից, պարտավոր են վճռականորեն ձգտել աշխատանքի պայմանների բարելավման:

Ինչպես արդեն նշեցինք, բանվորներից վոմանք կարծում են, թե աշխատաշպանության նպատակը կայանում ե միայն լրացուցիչ արձակուրդ, կրճատ բանվորական որ, սպեցհագուստ կամ սպեցկաթ հոգալու մեջ: Ես սխալ տեսակետը վորքան կարելի յե շուտ սկիտի վերացնել: Հենց այն հանդամանքը, վոր մեզ մոտ աշխատանքի իրավական պաշտպանության գործը բավարար վիճակում ե, իսկ առողջապահական-տեխնիկական թերությունները վերացնելու գործը՝ վատ, հենց միակ սա պահանջում ե, վոր իրենց բանվորների, ոլրոֆմիությունների, աշխատեսչության ուշադրությունն առաջին հերթին ուղղվի դեպի աշխատանքի պայմանները բարելավելու կողմը:

Եստեղից պարզ ե, վոր աշխատանքի պայման-ների բարելավումը մոտակա տարիների համար հանդիսանում ե աշխաղտպանության ամենակարևոր մասը: Վերջինս ավելի քան ճիշտ ե, քանի վոր ձեռնարկների սանիտարական-տեխնիկական թերությունների վերացումը հնարավորություն ե տալիս՝ քանվորների առողջությանն առանց վնասելու՝ զգալիորեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, դրանով ել բարելավել խորհրդային իշխանության ղրությունն ու բարձրացնել աշխատավարձը:

III. ԱՇԽԱՊԱՇՏԴԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՊԱ.ԲՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՎՈՐՈՒՄՆ

Խոսելով աշխաղտպանության գծով պրոֆմիության անելիքների մասին, վերադաս միութենական որդանների (գավառային, նահանգային բաժինների և կենտրոնական կոմիտեների) աշխատանքը չպետք ե շփոթել գործարկումների աշխատանքի հետ: Մենք չենք կարող, որինակ, միության վիճակային (օբլաստոյ) բաժնից պահանջել, վոր նա հետեւի աշխաղտպանության բոլոր կանոնների կիրառմանը՝ ձեռնարկների վարչությունների կողմից, թեկուղ հենց միայն նրա համար, վոր միության վիճակային բաժինների բոլոր աշխատակիցները ի վիճակի չեն մշտակես բոլոր ձեռնարկներում ել լինելու: Մյուս կողմից, անոգուտ կլիներ

գործարկոմներից և աշխաղաշտպանության հանձնաժողովներից պահանջել արտադրության չարիքների լուրջ ուսումնասիրություն կատարել և այդ չարիքներն արմատապես վերացնելու համար ծրագիր կազմել, — դա նրանց ուժից վեր եւ: Դրա համար ել անհրաժեշտ ե վերադաս միութենական որգանների, աշխատեսչության և գործարկոմների միջև պարտականությունները ճշտողեն սահմանավորել, եղ որդաննելից վոչ մեկը չծանրաբեռնելով իր ուժից վեր աշխատանքով:

Աշխատանքի տեսչությունը և արհմիություններն իրենց հսկողության տակ շատ ձեռնարկներ ունենալով, շատ հաճախ իրենց հսկողությունը տարածել կարող են միայն առողջապահական-տեխնիկական թերությունները վերացնելու պահանջներ ներկայացնելով:

Մինչդեռ ամեն մի ֆարբիկում և գործարանում բազմաթիվ մանր-մունք թերություններ կան, վորոնք բանվորի առողջությանը մեծ վնաս են հասցնում: Վոչ աշխատեսչությունը և վոչ ել պրոֆմիությունները ես բոլոր թերություններին, անշուշտ, հետեւել չեն կարող: Եղ աշխատանքը միայն ամեն մի ձեռնարկում մշտապես գոյություն ունեցող աշխաղաշտպանության հանձնաժողովի գործն եւ: Ահա թե ինչու աշխաղաշտպանության հանձնաժողովը գլխավորապես իր վրա պիտի վերցնի հենց աշխատանքի եղ մասը, միաժամանակ և հսկողությունը, թե ձեռնարկի վարչությունը վորչափ լրիվ ու ժամանակին ե կատարում աշխատեսչության առաջադրությունները և վերջինիս ու միու-

թյունների միջև կայացրած համաձայնությունները՝
Լայնածավալ ծրագրներ կազմել արտադրության բոլոր
չարիքները վերացնելու և մանավանդ աղմինիստրա-
ցիային ինքնուրույն պահանջներ ներկայացնել լուրջ
թերությունները վերացնելու (մեծամեծ ծախսեր պա-
հանջող), աշխաղաշտպանության հանձնաժողովն ինքը,
առանց աշխատեսչության, անշուշտ, չպիտի անի:

ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՉՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԶ

Մինչև վերջին ժամանակներս աշխաղաշտպանու-
թյան բոլոր ֆարբիկ-գործարանային հանձնաժողով-
ներն աշխատում ենին վոչ միանգամայն բավարար:
Սակայն անգամ այստեղ, ուր աշխատանքը փոքրի
շատե կարգի յե գրված, հանձնաժողովի ակտիվ ան-
դամները ժամանակի մեծ մասն անց են կացնում ապա-
հովագրական գանձարկղ, առքաժին, բնակարանային
բաժին և այլն գնալ-գալով: Շատ մեծ ուշադրություն
են դարձնում նույնպես սպեցիագուստ ձեռք բերե-
լուն: Դրա հետևանքով, հաճախ ել՝ աշխաղաշտպանու-
թյան խնդիրների սխալ ըմբռնման շնորհիվ, նրանց
շատ քիչ ժամանակ ե մնում հետևելու ձեռնարկների
վերոհիշյալ թերությունների վերացմանը, մասնավո-
րապես այնպիսիների, վորոնք հեշտ ե վերացնել:

Հասկանալի յե, վոր աշխաղաշտպանության հանձ-
նաժողովները չպետք ե հրաժարվեն կարգի դնելու

բանվորների գործը ապօանձարկղում, առբաժնում,
 բնակարանային բաժնում և այլն։ Հանձնաժողովն
 անկարող են նաև հրաժարվել ես հիմնարկներում կա-
 յացող ավելի կարեոր նիստերին և խորհրդակցու-
 թյուններին մասնակցելուց։ Սակայն, մյուս կողմից,
 տարվել միայն ես աշխատանքներով և հանձնաժո-
 ղովի մնացած գործնեյությունը մոռացության տալ
 վոչ մի դեպքում պետք չե։ Եղափսի գնալ-գալ տեղի
 պիտի ունենա միայն անհետաձգելի դեպքում, հատկա-
 պես զանազան նիստերի ու խորհրդակցությունների
 համար։ Եղ աշխատանքը տանելու համար պիտի
 առանձնացվին հանձնաժողովի անդամներից մեկ-յեր-
 կուսը, ենպես վոր մնացած անդամները, դրանց թվում
 և նախազահը, իրենց գլխավոր ուշադրությունը պիտի
 նվիրեն աշխատանքի պայմանների բարելավման
 գործին։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ - ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Նախ և առաջ աշխաղտպահանության հանձնաժո-
 ղովները պարտավոր են աշխատանքի տեսչի ակտով
 ստուգել՝ ժամանակին են կատարվում արդյոք վերջինիս
 առաջադրությունները, թե վոչ։ Վորեւ արգելքի դեպ-
 քում աշխաղտպահանության հանձնաժողովները պիտի
 աշխատեն վերացնել, իսկ անհնար լինելու դեպ-
 քում—անհապաղ հայտնել աշխատսչին և պրոֆմիության։

Աշխաղտականության հանձնաժողովի նախագահը
կամ անդամները պարտավոր են գոնե շաբաթը մեկ
անդամ շրջել արհեստանոցներն ու ցեխերը (հատկա-
պես վնասակար) և պարզել, չկա արդյոք սանիտարա-
կան-տեխնիկական վորեւ նոր թերություն և վար-
չության կողմից վերացվելմ են անցյալում նշված բա-
ցերը։ Եսպես, արհեստանոցները շրջելիս, աշխաղտ-
պանության հանձնաժողովի անդամները պետք ե-
ռոշադրության առնեն, թե՝ արդյոք արհեստանոցները
չափից ավելի նեղվացք չեն, ոդի մեջ փոշի կամ թու-
նավոր գազեր չկան արդյոք։ Շատ կարեոր ե ստուգել,
պատուհանների բոլոր ապակիները գցված և բավա-
կան մաքուր սրբված են։ Ամեն մի բանվորի համար
բավականաշափ ոդ կա և կան արդյոք ուր վոր պետք ե-
ցանկապատեր ու մահաջառներ, վճրչափ և արհեստա-
նոցի տաքության աստիճանը (չափից ավելի տաք
կամ ցուրտ հո չի) և չկա արդյոք «մշուշ» (ջրի գո-
լոշիներ)։ Կարգի են արդյոք արտաքնոցները, լվա-
ցարանները, դուշերը, խոնված չեն արդյոք անցքերն
ու հանդերձարանները։ Կան արդյոք բավականաշափ
յերեսսրբիչներ, սապոն, յեռացրած ջուր և այլն։

Բոլոր հայտնաբերված թերությունների մասին
հանձնաժողովը գործարկումի միջոցով պիտի տեղեկա-
ցնի ադմինիստրացիային, և յեթե ես թերություն-
ների վերացումը խոշոր ծախսերի ու լուրջ տնտեսա-
կան փոփոխությունների հետ կապված չե, ապա
ինքը գործարկումը պիտի աշխատի վարչության միջո-

ցով բոլոր ես թերությունները կարճ ժամանակում
վերացնել:

Են գեպքերում, յերբ վարչությունը հրաժարվի
կատարել եղ առաջարկները, աշխաղաշտաղանության
հանձնաժողովը դործարկումի միջոցով պիտի դիմի
աշխատեսչի և պրոֆմիության վիճակային կամ շրջանային
բաժնի ոգնությանը:

Ինչ վերաբերում ե աշխատանքի պայմանների
բարելավման միջոցներին, վորոնք կազմած են խոշոր
ծախսերի հետ, ապա դրա համար հանձնաժողովն ինքը
չպիտի բանակցություններ վարի աղմինիստրացիայի
հետ: Եղախիսի բանակցություններ պիտի վարեն աշխ-
ատեսուչությունը և պրոֆմիությունը (հանձնաժողովը
իհարկե պիտի մասնակցի) ենպես, վոր աշխատանքի
տեսչության և տնտեսական հիմնարկի միջև հատուկ
համաձայնություն կնքնլուց կամ թե աշխատեսչության
կողմից առաջադրություններ ներկայացնելուց հետո —
հանձնաժողովը ուշադիր հետևի, թե աղմինիստրացիան
վորչափ լրիվ և ժամանակին ե կատարում իր վրա
դրված աշխատանքները:

ՍՊԵՑ-ՀԱԳՈՒՄԸ. ՅԵՎ. ՆՌԵԱԶԳՈՒՇԱԿԱՆ
ՄԻԶՈՑՆԵՐ

Զեռնարկների սանիտարական - տեխնիկական թե-
րությունները վերացնելու խնդիրների հետ միաժա-
մանակ հանձնաժողովը պիտի հետևի բանվորների

սպեցիագուստը և հատուկ նախաղգուշական հարմաւությունները (ակնոցներ, ռասպիրատորներ) ժամանակին տալուն Տրվող սպեցիագուստի վորակը հաճախ շատ ցածր ե լինում, վորի շնորհիվ և շուտ ել մաշվում եւ Յեվ քանի վոր սպեցիագուստը տրվում է միայն վորոշ ժամանակով, ապա մաշվելուց հետո բանվորը մինչև ժամկետը լրանալը մնում է առանց սպեցիագուստի։ Այդ բանը թույլ չտալու համար աշխաղաղանության հանձնաժողովները պիտի ուշադրություն դարձնեն, սպեցիագուստը բանվորին տալու ժամանակ, նրա վորակին և վատ լինելու դեպքում՝ պահանջել ադմինիստրացիայից փոխել լավ հագուստով։

Հանձնաժողովը նույնպես ամենաուշադիր կերպով պիտի հետեւի, թե ոգտվեմ են արդյոք բանվորները (նրանք, վորոնց համար ե եղ) իրենց տրված հարմարություններից — ակնոցներից, ռասպիրատորներից և այլն։ Յեթե բանվորները ինչ-ինչ պատճառներով խուսափում են ոգտվել եղ առարկաններից և գերադասում են, ի վաս իրենց առողջության, աշխատել առանց դրանց, ապա հանձնաժողովը պիտի պարզի չողտագործելու պատճառները։ Ինչպես բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, բանվորներն հաճախ խուսափում են ակնոցներ ու ռասպիրատորներ գործածելուց։ Դա բացատրվում է նրանով, վոր և հաճախ ակնոցի ապահները շինում են վատ տեսակի՝ պատռհաննի՝ ապակուց, ռասպիրատորների միջոցով ել (նրանց վատ վորակի պատճառով) դժվար ե լինում շնչելը։ Են-

բոլոր դեպքերում, յերբ ես կամ են նախազգուշական հարմարությունը գործածության համար անպետք ե, հանձնաժողովն աղմինխտրացիայից պիտի պահանջի փոխարինելու դրանք լավերովի. Դրա հետ միասին աշխաղտանության հանձնաժողովը բանվորներին պիտի բացատրի ակնոցների և ռասպիրատորների կարևորությունը, վորպես հաշմության և թունավորման դեմ նախազգուշական միջոցների, և աշխատե գործածել տալ են բանվորներին՝ վորոնց անհրաժեշտ եւ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնին հասկանալի յե, վոր աշխաղտանության հանձնաժողովը (իր գլխավոր ուշադրությունը նվիրելով սանիտարական-տեխնիքական թերությունների վերացման հարցերին) պարտավոր ե հետեւելու նաև աշխատանքի իրավական պաշտպանության կանոնների իրագործմանը: Բանվորական որվա, ընդմիջումների, լրացուցիչ արձակուրդների, արտաժամյա աշխատանքների և այլ կանոնների խախտման բոլոր դեպքերում հանձնաժողովը պիտի փորձի եղ խախտումները վերացնել տեղում, իսկ ընարավոր չլինելու դեպքում դիմել աշխատանքի տեսչի կամ պրոֆմիության աջակցությանը:

Հատկապես անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել արտաժամյա աշխատանքների դեմ պայքարելու վրա: Մենք արդեն ցույց տվեցինք վոր ամեն

մի արտաժամյա աշխատանք վնասակար ազդեցություն
ունի բանվորների առողջության վրա։ Սակայն արտա-
ժամյա աշխատանքները մյուս կողմից անթուլատրելի
յեն նրա համար, վոր խանգարում են պայքարելու գոր-
ծազրկության դեմ, քանի վոր նրանց կիրառումով
վերացվում ե և նոր բանվորներ հրավիրելու անհրա-
ժեշտությունը։

Անհրաժեշտ ե սակայն նշել, վոր վարչության
միջնորդությունը արտաժամյա աշխատանքների մասին,
յերեմն գործարկոմների կողմից պաշտպանություն ե
գտնում։ Գործարկոմը և նրա աշխապաշտպանության
հանձնաժողովը պետք է լավ հիշեն, վոր արտաժամյա
աշխատանքները բանվորի առողջությանը վնասից զատ
վոչինչ չեն տալիս։ Դրա համար ել նրանք պիտի դեմ
արտահայտվեն արտաժամյա աշխատանք կիրառելուն։
Ես կանոնից գործարկոմները շեղվել կարող են թույլ
տալ միայն բացառիկ դեպքերում, մեքենաների փշա-
նալու կամ վորևե դժբախտության և այլ դեպքերում,
յերբ դա միանգամայն անհրաժեշտ է ձեռնարկի հա-
մար։ Նման պարագաներում արտաժամյա աշխատանք-
ներ պիտի թույլ տալ միայն փոքրաթիվ բանվորների
համար և են ել ամենակարճ ժամանակով։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ 7 ԺԱՄՑՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՈՐՎԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ

Առանձնապես պիտի կանգ առնել 7-ժամյա բան-
վորական որվա անցած ձեռնարկների աշխապաշտպա-

նության հանձնաժողովների աշխատանքի վրա։ Բան-
վորական որն ամբողջ մի ժամով կրծատելը, ան-
շուշտ խոշոր նվաճում և բանվորների կողմից։

Սակայն բանը նրանումն ե, վոր ձեռնակների
7-ժամյա բանվորական որվա անցնելը զուգորդվում ե
բանվորական որվա խաւացման [բանվորների ծանրա-
բեռնվածության և լրացուցիչ հերթ (ԸՄԵՀԱ) մտցնելու
(մեծ մասամբ Յ-րդ՝ գիշերային)] հետ։ Բանվորա-
կան որվա խաւա ծանրաբեռնվածությունը և վոչ
արտադրական դադարներն ու ընդմիջումները նվա-
զագույնի (մինիմումի) հասցնելը, բնականորեն, ուժե-
ղացնում և աշխատանքի պատճառած հոգնածությունը։
Մյուս կողմից, բանվորների լրացուցիչ հերթ մտցնելը
և հատկապես Յ-րդ գիշերային հերթն ավելի քիչ հնա-
րավորություն և տալիս բանվորական շենքերը բավարար
ողավետելուն և մաքրելուն Յերեկոյան և գիշերային
աշխատանքի անհրաժեշտությունը պահանջում է ձեռ-
նարկների մեջ աշխատավայրի անհրաժեշտ (ռացիոնալ)
լուսավորումն։ Յեթե դրան ավելացնենք, վոր գիշե-
րային աշխատողների համար մի շարք կենցաղային
անհարմարություններ են ծագում (շատ բանվորների
ցերեկվա քնելու համար հարմար բնակարան չունե-
նալը, գիշերվա տրամվայի բացակայություն, մսուր-
ներ և այլն), ապա պարզ կլինի, վոր ամեն մի ձեռ-
նարկի 7-ժամյա բանվորական որվա փոխադրվելը
պահանջում է վոր աշխաղտապահությունը վաղորոք
մի շարք միջոցներ ձեռք առնի։

Սովորաբար, Շ-Ժամյա բանվորական որվա անցած յուրաքանչյուր ձեռնարկում ջոկվում ե աշխատողների մի խումբ (հանձնաժողով) աղմինիստրացիայի, գործարկոմի և կուսակցական բջիջի ներկայացուցիչներից՝ ձեռնարկը աշխատանքի նոր պայմանների անցնելու համար պատրաստելու։ Աշխաղտպանության հանձնաժողովի կարևորագույն՝ հարցերից մեկն ե — մի շարք գործնական առաջարկների մշակումը և Շ-Ժամյա բանվորական որվա անցնելու հետ կապված հարցերը հիշյալ՝ նախապատրաստական հանձնաժողովի առաջ դնելը։

Աշխաղտպանության հանձնաժողովը նման գեալքում իր առաջարկների մեջ ժամանակին աղմինիստրացիայից պիտի պահանջի արհեստանոցներում ողավետության սարքերի ուժեղացում (շենքը լավ և արագ ողավետելու նպատակով), լուսավորության հարմարություններ՝ յերեկոյան և գիշերային աշխատանքների համար, մինչև բանվորների նոր հերթը գործի անցնելը բանվորական շենքերի մաքրման կազմակերպումը, անվտանգության տեխնիկայի ասպարիզում զանազան սանիտարական թերությունների վերացումն, Բացի դրանից, աշխաղտպանության հանձնաժողովը պիտի մտածի խոտացած և գիշերային աշխատանքի անցնող բանվորների կենցաղային պայմանները բարելավելու միջոցների մասին (մանկական մսուրների, ձեռնարկներին կից հանգստյան սենյակների և ճաշարանների կազմակերպումը, հնարավորին չափ բնակարանների հարմար վերաբաշխումն և այլն)։

Գիշերային աշխատանքի անցնող բանվորների ցուցակը կազմելիս, աշխաղաշտպանության հանձնաժողովը պիտի հետեւ, վոր գիշերային աշխատանքի չանցնեն հղի կանայք, թույլ առողջության տեր բանվորներ ու բանվորուհիներ, նույնպես և անշափահասներ։

Մի խոսքով, աշխաղաշտպանության հանձնաժողովի հոգսը պիտի լինի, վոր խոտացրած և գիշերային աշխատանքի անցնելը անսպայմանորեն զուգորդված լինի աշխաղաշտպանության գծով մի շարք բարելավումների հետ, վորով հնարավոր կլինի նման աշխատանքի վնասակար հետեւանքները կանխել։

ԱՇԽԱՂԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՆԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԴԸ

Աշխաղաշտպանության հանձնաժողովների բոլոր վերոհիշյալ պարտականությունները վերաբերվում են անմիջականորեն աշխատանքի պաշտպանության հարցերին։ Սակայն հանձնաժողովներն ես խնդիրներից զատ ունին և ուրիշները։ Եսպես, աշխաղաշտպանության հանձնաժողովի վրա յե ընկնում սանատորիաների և հանգստյան տների տեղերի բաշխումը, բժշկական ոգնություն ստանալու գործում բանվորներին աջակցելը, իրենց ռայոնի բուժ-հիմնարկների աշխատաքին մասնակցելը, ոգնելու բանվորներին, վոր ապահովագրական գանձարկղները նրանց ավելի կանոնավոր սպասարկեն, հետեւ աղմինիստրացիայի կողմից վճարները

ժամանակին մուծելուն, բանվորների բնակարանային պայմանների բարելավման հոգար և այլն:

Պարտականությունների ես ամբողջ շարքը հաջողությամբ իրագործելու համար, անհրաժեշտ ե հաջողեցնել աշխաղտավանության հանձնաժողի կազմի մեջ մտցնել ամենաակտիվ ընկերների, ցանկալի յենմանապես մասնագետների ներկայացուցչին: Չնայած ըստ կանոնադրության հանձնաժողովի կազմի մեջ կարող ե մտնել Յ-ից մինչև Շ մարդ, սակայն աշխատանքների մեծությունը նկատի ունենալով դատապարտելի չե հանձնաժողովի անդամների թիվը ավելացնելը: Աշխաղտավանության հանձնաժողովի ամեն մի անդամը պետք ե հետևի աշխատանքի վորոշ մասին, վորի համար և պատասխանատու պիտի լինի:

Ինչպես փորձը ցույց տվեց, աշխաղտավանության հանձնաժողովների թույլ կողմը կայանում ե նրանում, վոր նրանք շատ քիչ են ստուգում, թե ադմինիստրացիայի կողմից ինչ չափով են կատարվում իրենց առաջարկները: Եդ բանը բնականորեն տեղիք ե տալիս ադմինիստրացիայի վոչ լուրջ վերաբերմունքին՝ դեպի հանձնաժողովի առաջարկների իրագործումը: Հանձնաժողովի կողմից իր առաջարկների ճիշտ ձևակերպումը, դրանց կիրառման համար ժամկետ նշանակելը, իր անդամներին պարտադրելը ադմինիստրացիային հետևելու — ես բոլորը միանգամայն անհրաժեշտ են աշխաղտավանության հանձնաժողովների ուղիղ և արդյունավետ աշխատանքի համար:

IV. ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

Բանվորների հետ դժբախտ պատահարների հարցը
չափազանց լուրջ խնդիր է, որա համար ել անհրա-
ժեշտ ե նրա վրա հատկապես կանգ առնել:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ ԴԺԲԱԽՏ ԴԵՊԲԵՐԻ ԹԻՎԸ

Արձանագրված դժբախտ պատահարների հաշվե-
տվությունները ցույց են տալիս, վոր 1926 — 1927 թ.,
որինակ, յուրաքանչյուր 1.000 բանվորին, միջին
թվով բոլոր արտադրությունների նկատմամբ տարե-
կան ընկնում ե 172 դեպք, վորից աշխատունակու-
թյան կորուստ ե զալիս (այսինքն հիվանդանալ) 1 որից
ավելի: Բայց են դեպքում, յերբ մանածագործարան-
ներում դժբախտ դեպքերի թիվը տարեկան 1000 բան-
վորին կազմում ե միայն 63, մետաղի արդյունա-
բերության մեջ ամեն 1.000-ին ընկնում ե 270 դըժ-
բախտ դեպք: Անհրաժեշտ ե սակայն նկատի ունենալ,
վոր դրանց մեջ կան մեծ թվով թեթև դժբախտ դեպ-
քեր, վորոնք կապված չեն լուրջ հետևանքների հետ:

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ի՞նչն ե դժբախտ պատահարների պատճառը:

Ամեն մի աշխատանք, վորը կապ ունի մեքենա-
ների, կրակի, ծանրություններ փոխադրելու, սուր,
ծանր և թունավոր առարկաների գործածության հետ

և այլն, առաջ եւ բերում դժբախտ պատահար: Յերբ
մեքենաներն ու սաանոկները հարկ յեղած ձևով ցան-
կալատված են, զանազան ծանր ու վտանգավոր աշ-
խատանքներ, նույնպես և ծանրությունների փոխա-
զրումը մեքենական միջոցով են կատարվում, այդ
դեպքում, իհարկե, դժբախտ գեպքերի թիվը խիստ պա-
կասում եւ:

Յեվ, ընդհակառակը, դժբախտ պատահարների թիվը
աճում է, յերբ մեքենաներն ու ստանոկները մաշված
են, արհեստանոցները նեղ են և վատ կահավորված,
աշխատանքի պայմանները (լուսավորություն, տա-
քություն, ողավետում) վատ են, ծանրությունների
փոխազրումը և այլ ծանր ու վտանգավոր աշխա-
տանքներ հնացած, ձեռքի միջոցով են կատարվում:

Մեր ձեռնարկները, ինչպես վերը մատնանշեցինք,
մեծ մասամբ վատ են կահավարված. դրա համար ել՝
բազմաթիվ առողջապահական-տեխնիկական թերու-
թյուններ ունեն: Դա յե հանդիսանում հաճախակի-
դժբախտ պատահարների գլխավոր պատճառներից
մեկը: Սակայն դրանից զատ, դժբախտ պատահարների
շատության վրա ազդում ե նաև՝ մեր գործարաններն
ու ֆաբրիկները մեծաքանակ անպատճառ բանվորներ
ընդունելը, նրանց թույլ ծանոթությունը անվտան-
գության կանոնների հետ, իրենց բանվորների սեփա-
կան անզգուշությունն ու անփութությունը, և իվերջո՛
շատ գործարաններում արտաժամյա աշխատանք կի-
րառելը:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒԹՅ

Դժբախտ պատահարների դեմ կռվելու համար անհրաժեշտ ե, հետևաբար, նախ և առաջ մեր գործարաններն ու ֆաբրիկները նորոգել ու լայնացնել, ստանձնապես՝ նորոգել մեքենաներն ու ստանոկները։ Մյուս կողմից անհրաժեշտ ե ձգտել շատ վտանգավոր ու ձեռքի միջոցով կատարվող աշխատանքներից անցնելու մեքենական (մեքենաների) և արտադրության անվտանգ միջոցների։ Հենց ես խնդիրն ե խորհրդային իշխանությունն իր առաջ դրել՝ մեր յերկրի արդյունաբերությունը զարգացնելու նպատակով (ինդուստրացում)։ Մոտակա տարիների ընթացքում, ինչպես արդեն ցույց ենք տվել, հին ձեռնարկների կապիտալ (հիմնական) վերաշինությունն ու նորերի կառուցումը խոշոր չափերով ե կատարվելու։ Ես տեսակետից քանի դասակարգի շահերը պահանջում են ամեն կերպ աջակցել մեր պետությանը նրանով, վոր նա տարեցտարի ավելացնի միջոցների կուտակումը և եղ միջոցները ծախսի հների բարելավման և նոր ձեռնարկների կառուցման վրա։

Մյուս կողմից, դժբախտ պատահարների դեմ պայքարի հաջողությունը պահանջում ե, վոր բոլոր կապիտալ վերաշինումները, նոր գործարաններն ու ֆաբրիկները և բոլոր ձեռք բերվող մեքենաներն ու ստանոկները լիովին համապատասխանեն աշխատանքի

պլաշտապանության պահանջներին։ Աշխատանքի տեսչության և պրոֆմիությունների ուղիղ աշխատանքներ ասպարիգում միաժամանակ հանդիսանում ե դժբախտ պատահարների դեմ պայքարելու կարևորագույն միջոցներից մեկը։

ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄՐԸ

Դժբախտ պատահարների դեմ պայքարելու գործում մյուս կարևոր աշխատանքը կայանում է բոլոր զործող մեջենաների ու ստանոկների վրա և աշխատանքի բոլոր վտանգավոր վայրերում ցանկապատումներ ու նախազգուշական հարմարություններ կառուցելու մեջ։ Ես աշխատանքի իրազործմանը պետք ե հետեւեն թե աշխատեսուչն ու պրոֆմիությունները, և թե աշխաղաղապահնության հանձնաժողովներն ու ամեն մի բանվոր առանձին։ Անհրաժեշտ ե նկատի ունենալ վոր ցանկապատումների և նախազգուշական հարմարությունների բացակայությունը հանդիսանում ե հաշմության ամենահաճախակի պատճառը։

ԱՇԽԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՐԸ

Յերբորդ խնդիրը կազմում ե գոյություն ունեցող ձեռնարկներում աշխատանքի պայմանների բարելավումը։ Առաջին հայացքից կարող ե թվալ, թե վատ լուսավորությունն ու տաքությունը, ողի մեջ

փոշու և թունավոր գաղերի գոյությունը, արհեստանոցների նեղվածքը և այլն, դժբախտ պատահարների հետ վոչ մի առնչություն չունեն: Մինչդեռ, իրականում ես բոլորը մեծ ազգեցություն ունեն բանվոների հաշմության վրա: Յեզ իսկապես: Աշխատանքն, որինակ, վատ լույսի տակ, շոգի և վատ ողավետության դեպքում, ինչպես հայտնի յե, հոգնեցնում և թուլացնում ե մարդու որդանիդմը: Հիվանդագին վիճակում մարդս ավելի քիչ զգուշ և հոգատար ե լինում, զադարում ե շատ բան նկատելուց: Հերիք ե վոր բանվորն եղ վիճակում մի վայրկյան դադարի անհրաժեշտ նախազգուշական միջոց ձեռք առնելուց—իսկույն և յեթ դժբախտ պատահարը պատրաստ է: Նույնն ե լինում նաև արհեստանոցների նեղվածքի և բանվորի մարմնի դիրքը անհարմար լինելու դեպքում: Եսպիսով, աշխատանքի պայմանների բարելավումը և ձեռնարկների սանիտարական-տեխնիկական թերությունների վերացումն ազատում ե բանվորին վոչ միայն սովորական հիվանդություններից, այլև դժբախտ դեպքերից:

ԸՆԴԻՇԽՉՈՒՐՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԶ

Դժբախտ դեպքերի դեմ պայքարի չորրորդ միջոցը—դա՝ բանվորական որվա ընթացքում գոնե առնվազն մի յերկարատես ընդմիջում սահմանելն ե և արտաժամյա աշխատանքներ չթույլատրելը: Արտաժամյա

աշխատանքներն ու աշխատանքի մեջ ընդմիջումի բացակայությունը բանվորների մեջ հողնածություն ե առաջացնում, իսկ դա իր հերթին վոչ միայն հիվանդությունների պատճառ ե գառնում, այլև դժբախտ դեպքերի թիվն ավելացնում:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՑՆԵԼԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՎՏԱՆԳՆԵՐԻ ՀԵՏ

Հինգերորդ միջոցը — բոլոր բանվորներին, առանձնապես նոր ընդունվածներից ամեն մեկին իր աշխատանքի վտանգների հետ մանրամասն ծանոթացնելն ե: Յերիտասարդ բանվորների մեծ մասի անծանոթությունն իրենց մեքենաների և ստանոկների վտանգավոր կողմերի հետ, նախազգուշական միջոցների հետ թույլ ծանոթությունը և հաճախ՝ գործիքների ու նյութերի հետ անշնորհք վարկելը պակաս թվով դժբախտ դեպքեր չեն առաջացնում: Դժբախտ պատահարների դեմ հաջողությամբ պայքարելու համար, հետևաբար, անհրաժեշտ ե ամենալուրջ ուշադրություն դարձնել՝ բանվորներին ծանոթացնել արտադրության վտանգների և մեքենաների, գործիքների ու նյութերի հետ ճիշտ վարկելու:

Միաժամանակ պետք ե բանվորներին մանրամասն ծանոթացնել նախազգուշական անհրաժեշտ միջոցների հետ և ցույց տալ թե վնրապիսի ծանր հետևանքներ կարող են առաջացնել եղ միջոցների արհամարումը:

Պետք ե խիստ կարգ սահմանել, վոր վոչ մի բան՝
վոր մեքենայի կամ ստանուկի մոտ թույլ չտրվի՝
առանց եղ կանոնների հետ ճիշտ և լավ ծանոթա-
նալու: Են բանվորներն ել, վորոնք միանդամից չեն
յուրացընել եղ կանոնները, պետք ե վերստին ծանո-
թանան նրանց հետ, մինչև վոր լավ սովորեն:

Ես աշխատանքը պետք ե կատարի ձեռնարկի վար-
չությունը, դրա համար ել աշխաղաշտականության հանձ-
նաժողովի և իրենց բանվորների առաջնակարգ պարտա-
կանությունն ե հետեւլու, թե աղմինիստրացիայի կող-
մից ես աշխատանքն ինչպես ե կատարվում: Աշխաղաշտ-
ականության հանձնաժողովը պարտավոր ե առանձնա-
պես ձգտելու, վոր մեքենաների ու ստանոկների հետ
վարվելու հասարակ և պարզ լեզվով գրված կանոն-
ները, ինչպես նաև նախազգուշական պլակատներ՝ ան-
պայմանորեն կախված լինեն ամեն մի արհեստանոցի,
գործարանային բակի, գրասենյակի կամ գործարկումի
աշքի ընկնող տեղերում:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀՐԱԺԵՏՏ
ԶԴՈՒՇՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼԸ

Վերջապես, դժբախտ պատհարների դեմ պայքա-
րելու վեցերորդ միջոցը, վորպես հինգերորդից բղխող,
հանգում ե՝ բոլոր բանվորների կողմից անհրաժեշտ զգու-
շություն պահպանելուն: Պետք ե նշել, վոր ես ուղղու-
թյամբ մեզ մոտ ամեն ինչ կարգին չե: Շատ բանվոր-

ներ, ուղենալով, որինակ, ժամանակը խնայել, հաճախ մեքենան կամ ստանոկը յուղում են գործելու ժամանակ, կամ թե՝ փոկն անվին են հաղցնում մեքենան կամ տրանսմիսիան չկանգնեցրած, զիտենալով հանդերձ, վոր դա վտանգավոր եւ:

Հաճախ իրենք բանվորները, հակառակ կանոններին, հանում են ցանկապատերը մեքենայից կամ ստանուկից, կամ թե՝ ակնոցները չեն դնում միայն նրա համար, վոր դա վորոշ վորքրիկ անհարմարություն եներկայացնում:

Հաճախ ել բանվորները անվտանգության կանոնները չեն պահպանում իրենց «տղամարդությունը» ցույց տալու համար: Մի յերկու անգամ կանոնների եղակիսի խախտումը անցնում է հարթ, իսկ վրա յերրորդ անգամը, մեկ ել տեսար դրա փոխարեն բանվորն իր առողջությունից կամ կյանքից զրկվեց: Ինքն իրեն հասկանալի յե, վոր աշխապաշտպանության հանձնաժողովը և բոլոր զիտակից բանվորները պետք եղայքարեն թեթևամիտ անզգուշության դեմ:

Ես չարիքի դեմ հնարավոր եւ և պետք եղայքարել, անգիտակից բանվորներին բացատրելով իրենց արարքի ամբողջ վնասակարությունը, իսկ առանձին դեսպերում ել՝ պատժելով:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՎՐԱ ԽԻՍՏ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՉՆԵԼ

Մենք այլևս կանդ չենք առնի դժբախտ պատահարների դեմ պայքարելու վերը հիշած բազմա-

թիվ այլ միջոցների վրա, ինչպես են, որինակ, անհարմար սպեցիալուստը լավով փոխարինելու, լավ ցանկալատումներ ու ակնոցներ պահանջելու, ստանոկների տեղը փոխելու, բանվորին սարքին գործիք և լավ պատրաստված նյութեր տալու, աշխատանքները ճիշտ կազմակերպելու (վոր մի բանվորը մյուսին չխանդարի) վրա և այլն Ամեն մի աշխատաշապանության հանձնաժողով և յուրաքանչյուր բանվոր, վորոնք իւ ենց նպատակ են դրել պայքարելու դրժքախտ պատահարների դեմ, իրենք կնկատեն և հենց իրենց արտադրության մեջ բազմաթիվ ուղիներ կդրանեն հաշմությունների թիվը պակասեցնելու համար։ Անհրաժեշտ ե միայն, վոր դրա վրա կենտրոնացվի ամբողջ բանվորական մասսայի ուշադրությունը։ Դա կհարկադրի ձեռնարկի վարչությանը ուժեղացնելու պայքարը դժբախտ պատահարների դեմ և միութենական ու աշխատանքի պաշտպանության որպանների ուշադրությունը կենտրոնացնելու այդ հարցի վրա։

ԳԺԲԱՆՑ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ
ԱՐՁԱՆԱԴՐՈՒԹՅԸ

Դժբախտ պատահարների դեմ հաջող պայքարելու համար անհրաժեշտ ե իմանալ, թե բանվորների հետ վորքան դժբախտ պատահարներ են լինում և ամեն մի դեպքն ինչից ե պատահում։ Եդ բանը պարզելուն ոգնում ե մեզ մոտ գործող որենքը, վորի համաձայն

ձեռնարկի վարչությունը պարտավոր ե ամեն մի դժբախտ պատահարն արձանագրել տալ աշխատեսչի մոտ: Դժբախտ պատահարների ամեն մի ակտի վրա մատնանշված պիտի լինի հաշմության պատճառը:

Դժբախտաբար, սակայն, ես որենքը կյանքի մեջ լիովին չի կիրաւվում: Բանից դուրս ե գալիս, վոր շատ դժբախտ պատահարներ, վորոնք պատճառ են դառնում աշխատունակությունն անդամ մի քանի որով կորցնելուն, աղմինիստրացիայի կողմից չեն արձանագրվում, և վոր գործարկոմներն ու աշխաղտպանության հանձնաժողովները դրա վրա նայում են մատների արանքով:

Ավելի վատ ե գործը դժբախտ պատահարների պատճառները պարզելու խնդրում: Աշխատանքի տեսուչը փաստորեն հնարավորություն և ժամանակ չունի բոլոր, մանավանդ թեթև, պատահարների պատճառներն անձամբ հայտնաբերելու, դրա համար ել նա ստիպված է գործարկոմի կամ իրեն՝ վնասվածի ցուցմունքներին հավատալու: Բայց եստեղ, ինչպես ցույց են տալիս դժբախտ պատահարների մասին վորոշ ակտերը, գործարկոմներն ու տուժած բանվորները, հաճախ չգիտակցելով ամեն մի դժբախտ պատահարի իսկական պատճառն հայտնաբերելու կարևորությունը, հաշմության պատճառի մասին անձիշտ ցուցմունքներ են տալիս: Եսպես, դժբախտ պատահարի պատճառը հաճախ վերագրվում ե իրենց, բանվորների անփույթ վերաբերմունքին: Մինչդեռ իրականում նման դժբախտ

պատահարի պատճառն ամենեին ել բանվորի անզգուշությունը չե, այլ աշխատանքի պայմանները։ Պարզ ե, որինակ, վոր յեթե մեքենայի վրայի ցանկապատը խանգարում ե աշխատելու և բանվորը դա հանելով, հաշմում ե, ապա դժբախտ պատահարի պատճառը վոչ ենքան բանվորի անզգուշությունն ե, վորքան վարչության մեղքը, վորն անպետք ցանկապատ ե դրել։ Կամ, որինակի համար, արհեստանոցը վատ լուսավորված լինելու, կամ չափազանց շոգի ու թունավոր փոշու պատճառով բանվորը զրկված ե լինում իր շարժումներին հետևելու հնարավորությունից և դրա հետևանքով դժբախտ պատճառը բանվորի անզգուշության հետևանքով չի լինում, այլ բացառապես աշխատանքի վատ պայմանների։

Կրկնում ենք, վոր եդ դժբախտ պատահարների մեծամասնությունը գործարկումներն ու իրենք տուժածները (չխոսելով դեռ աղմինիստրացիայի մասին) վերագրում են բանվորների անզգուշությանը։ Վերջում պրոֆմիություններն ու աշխատանքի տեսչությունները սխալ պատկերացում են ստանում դժբախտ պատահարների պատճառների մասին և դրա համար ել թուլանում ե պայքարը դժբախտ պատահարների դեմ։ Եսպես, որինակ, յեթե աշխատեսուչը կամ միությունն իմանար վոր եսինչ գործարանում ցանկապատերի անպետք լինելու կամ լուսավորության վատ լինելու հետևանքով եսքան դժբախտ պատահար ե յեղել, տեսուչն,

անկասկած, անհրաժեշտ միջոցներ ձեռք կառներ։
Ազմինիստրացիայի կողմից եղ միջոցները ձեռք չառ-
նվելու դեպքում նրան դատական պատասխանատվու-
թյան կկանչեր և դրանով կստիպեր վարչությանը
վերոհիշյալ թերությունների վերացումն արագացնել։
Ահա թե ինչու հետևելը, վոր բոլոր դժբախտ պատա-
հարները լիովին արձանագրվեն. իսկ ամեն մի հաշ-
մության խակական պատճառը ճշտորեն արձանա-
գրելը գործարկումների և աշխաղաշպանության հանձնա-
ժողովների կարևորագույն խնդիրն ե հանդիսանում։


Դրա հետ միաժամանակ, աշխատանքի տեսչու-
թյունը պարտավոր ե ավելի ուշադիր վերաբերվելու-
րանվորների հետ պատահած դժբախտ պատահարների
հետագուտմանն ու պատճառների հայտնաբերմանը։
Աշխատեսուչների չափաղանց դյուրահավատ վերաբեր-
մունքը ակտերի մեջ գրվածներին՝ պետք ե վերացվի։
Բացի եղ, աշխատեսուչները պետք ե ուժեղացնեն դըժ-
բախտ պատահարների համար ձեռնարկների. վարչու-
թյուններին պատասխանատվության յենթարկելը։ Ան-
հրաժեշտ միջոցներ ձեռք չառնելու համար պատժից
աղատելը թուլացնում ե ազմինիստրացիայի ուշա-
դրությունը դժբախտ պատահարների դեմ պայքարելու
գործում։

Յեվ վերջապես, բոլոր պրոֆմիությունները պիտի
յեռանդուն մասնակցություն ցուց տան դժբախտ պա-
տահարների դեմ պայքարելու համար։ Նրանք պիտի
ուժեղացնեն իրենց ճնշումը թե տնտեսական որգան-

ների և թե աշխտեսչության վրա, պայքարեն բան-
վորների անզգուշության և անփութության դեմ, իսկ
վոր գլխավորն ե, ես ուղղությամբ ավելի ևս պետք ե-
բարելավել գործարկումներին և աշխաղաշտպանության
հանձնաժողովներին հրահանգելու գործը:

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Աշխատանի իրավական պատպանությունը	3
II. Աշխատանի պայմանների բարելավումը	17
III. Աշխաղաշտպանության հանձնաժողով երի աշխատանիքը .	31
IV. Դյբախտ պատահարներ	44



ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0039858



20 чпм.

и. п.

A 1
4710

А. Сокольский
Охрана труда и
как ее проводить

На армянском языке

ИЗДАНИЕ ЦЕНТРИЗДАТА и В. Ц. С. П. С.
Москва, центр, Никольская, 10